



ԲԱԶՄԱՎԷ՞՞

Ը ՏԱՐԻ ԹԻՒ 15.

1850

ԾԳՈՍՏՈՍԻ 1

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԱՆԽԱՐՀԱՊԻՏԱԿ

Ե .

Հերակլիտոս և Գլխիկիտոս :

ՄԱՐԴՍ ՚ի սկզբանէ երջանիկ վիճակի մէջ հաստատուեցաւ, որուն ծածուկ վկայութիւն մ'ունի ինքն իրմէ, և յոյս մ'ալ հասնելու անոր. ասկից կը ծնանի իր ուրախութիւնը և իր ծիծաղը. բայց գրեթէ նոյնպէս հնուցմէ ալ թշուառութեան մէջ ընկած ըլլալն ալ գիտէ և կը տեսնայ, ասկէց է իր տրտմութիւնը և իր լացը : Գրեթէ բոլոր մարդկային գործողութիւնք կամ առջինէն կամ երկրորդէն մասն ունին. և գրեթէ մարդուս զէմքը որ իր սրտին հայելին է՝ միշտ կամ ուրախութեան կամ տրտմութեան կերպարան կ'առնու. երեսները կամ տրտմութեամբ կախուած են կամ ուրախութեամբ սար-

զած. աչուրները կամ ծիծաղով կը փայլին կամ արցունքով. նոյն իսկ արցունքը երբեմն ուրախութեան երբեմն տխրութեան կը ծառայէ, այնչափ մտտիկ են աս երկուքին աղբիւրներն, և այնչափ շուտով իրարու կը յաջորդեն :

Բայց թէպէտև ասոնք այսպէս մտտիկ և հարազատ են մարդուս, բայց բնութեամբ ալ ամենեւին իրարու հակառակ, պէտք է գտնել թէ ո՞րն է աւելի յարմար կամ վայելուչ մարդուս : Թէ որ ուրախութեան և տրտմութեան առիթները քննելու ըլլանք, առանց տարակուսի վերջինները աւելի զօրաւոր և ստոյգ են, վասն զի ամէն տեղ ամէն ատեն մարդիկ խօսատվանած են թէ,

Թշուառ և վշտալից վիճակի մը մէջ են, և թէ աշխարհիս բարութիւններն և զուարճութիւններն խաբէական բաներ են . և նոյն խակ զանոնք գովող և սիրողներն ալ լաւ մը փորձելէն վերջը՝ կը խոստովանին իրենց խաբուած ըլլալը : Եւրո վրայ խօսքերնիս չեմք երկրնցըներ, վասն զի թէ որ ոչ որ ալ չըսենք՝ գտնէ խիստ քիչ մարդ պիտի գտնուի հակառակ կարծեօք : Ուստի խնդիրը կը մնայ՝ թէ մարդ չորս դին և նաև իր վրայ տեսակ տեսակ չարիք և նեղութիւն տեսնալով՝ պէտք է ծիծաղի թէ լայ :

Ետենօք հին Յունաց փիլիսոփայից մէջ երկուք մը կային, զրեթէ ժամանակակից, մէկն յԱփեսոս՝ Հերակլիտաս անունով, մէկալն յԱբղերա՝ Վիմոկրիտոս անուն . առաջինը անդադար կը մտածէր և կը տեսներ մարդկան խեղճութիւններն, հակասական և փնտասկար գործքերն, անպատշաճ մտածութիւններն, և պարզ ըսելով՝ խենթ ու խելառ կրբերն և անոնց հետեանքներն . և անդադար կու լար կ'ողբար անոնց վրայ : Երկրորդն ալ նոյն բանը տեսնելով և դիտելով՝ անդադար կը ծիծաղէր . մարդ մը տեսածնուն պէս՝ մէկը անոր պակասութիւններն և խեղճ վիճակն մը տածելով՝ արցունք կ'արձրկէր, մէկալն անոր թեթեամտութիւններն մտածելով՝ ծաղր կ'արձրկէր . մէկին աչքը միշտ արցունք, մէկալինը միշտ ծիծաղ . մէկուն բերանը միշտ ա՛հ, ա՛հ, մէկալինը՝ միշտ հա՛ հա՛ :

Հերակլիտաս կ'ըսէր . Պէտք է որ մարդ անդադար լայ և ողբայ իր և իր նմանեացը չարեացը վրայ, թէ որ սիրտ ունի : մանաւանդ մտածելով չարեաց ծանրութիւնը և չարաց բազմութիւնը . և ս առաւել ինքն իր վրայ դառնալով և չորս դին չարեօք առած տեսնելով՝ պէտք է որ սրտակտուր ըլլայ . ողբալն՝ դատապարտել մ'է չհաւնելու գործքերը . քանի որ մարդիկ այս խեղճ վիճակին մէջ են՝ ողբալու արժանի են, և որովհետև այն վիճակէն դուրս չեն ելլեր՝ միշտ ողբալի են :

Վիմոկրիտոս ալ կ'ըսէր . Սարգս պակասաւոր է, պակասութիւններն պէտք է արհամարհել . արհամարհելն ծիծաղելով կ'ըլլայ և ոչ լալով . ծիծաղելու տեղ լալու ըլլաս՝ կարծիք մը կու տաս թէ այնչափ արհամարհելի չեն այն չարիքներն՝ որ արցունքներովդ կը պատուես . չարիքներն ալ շատ հեղ այնպէս կարծուելէն չար կ'երևան, և միշտ չար կ'երևան : Ինչ որ մարդիկ իրենք իրենց չար չհասցընէին, թերևս զթալու էին, բայց երբ իրենք իրենց կը փնտսեն՝ ինչպէս վրանին ծիծաղինք : Եւ որովհետև մարդիկ այս ճամբան բռնել կ'երթան, միշտ ծիծաղելու արժանի են :

Երկուքն պատճառները ըսելով՝ մարդ երկուքին ալ կրնայ իրաւունք տալ . բայց որովհետև մէկ կողմէն՝ չի կրնար միանգամայն թէ Հերակլիտաս և թէ Վիմոկրիտոս ըլլալ, չի կրնար նոյն գործողութեան վրայ թէ լալ և թէ ծիծաղիլ . մէկալ կողմէն ալ չի կրնար իր չորս դին պատած չարեաց անտարբեր ըլլալ, պէտք է կամ մէկուն հետեի և կամ մէկալին : Եւ արդէն առանց դաս առնելու՝ մարդիկ երկու բաժնուած՝ ոմանք Հերակլիտեան են ոմանք Վիմոկրիտեան . և թէ որ հիմայ ընկերութեան մէջ այս խնդիրս ձգես՝ կը տեսնես որ մէկէն երկպառակութիւն կ'ըլլայ, մէկը այս կողմը կը պաշտպանէ, մէկալն այն կողմը : Պէտք է որ ասոնցմէ մէկն աւելի իրաւացի ըլլայ քան զմէկալն :

Օայս գտնելու համար՝ յարմար և զուարճալի հնարք մը կը սեպւեմ՝ այն երկու հակառակ կարծեաց մեծ առաջնորդներուն վարքը քննել, և տեսնել թէ իրենց դրած սկզբունքով ինչ հետեցուցին, և ինչ համարմունք ձգեցին վրանին՝ իրենց ժամանակակիցներէն : Կախ երթանք յԱփեսոս :

Նրապարակին մէջ փնթի մարդ մը կը տեսնաք, լալիան մարդ մը կը տեսնաք, ծուռ աչքով, մութ նայուածքով, մութ խօսուածքով . անդադար հստալող մարդը տեսաք . անիկայ է Հերակլիտաս . ամէնքը իրեն անուն դրած են

Սթին մարդ : Հերակլիտաս միշտ սև կր տեսնայ կամ միշտ սևերը կր տեսնէ . մարդկանց պակասութիւնները տեսնելով , մտածելով , ողբալով՝ գրեթէ մարդկութիւնն ալ պակասութիւն մը եղած է աչքին : Բոլոր աշխարհս խենթերու և չարերու տեղ մը կ'երևայ իրեն . որոնց մէջ ամենէն անփնաս մանր տղաքներն գտնելով՝ կ'երթայ անոնց հետ կր խաղայ . գուցէ կը մոռնայ՝ թէ ինքն ալ մեծ տղայ մըն է ինչպէս ուրիշ մարդիկն ալ զորոնք կը դատապարտէ , և թէ տղաքն ալ մեծ մարդիկն ալ նոյն բաներն կ'ընեն , բայց իրենց համեմատ , մէկը մեծ մէկան պզտիկ : Կայեցէք . Կփեսայիք եկեր իրմէ օրէնք կը խնդրեն . Չեզի օրէնք տալ չըլար , կ'ըսէ , վասն զի պիտի չարահայ . լաւ բաները լաւերու համար են . դուք լաւ չէք , ուրիշներն ալ լաւ չեն : Ինք զինքն ալ լաւ չի սեպեր , անոր համար կը նեղանայ Կփեսացոց որ զինքը կը պատուեն , և կը սիրէ զ՝ թենացիս՝ վասն զի զինքը կը նախատեն : Մարդուս բնութիւնը ծուռ կը տեսնէ՝ ու կու լայ , շտկել կ'ուզէ՝ կու լայ , չի կրնար շտկել՝ կու լայ . վերջապէս յոյսը կտրած՝ կը թողու զքաղաքն ու կ'երթայ լեռներու անձաւներու մէջ կը բնակի : Սրան հիւանդութիւն կու գայ , կը ջրգողի . կը ստիպուի դառնալ նորէն մարդկանց մէջ , բայց անոնց չի հաւնիր , և ոչ բժիշկներուն . նաև սովորական խօսակցութեան կերպն ալ իրեն յարմար չերևար , բժիշկներուն կը հարցընէ , թէ Բնձրեւը կըրնա՞ք չորցընել . անոնք բան չեն հասկընար . այն ատեն կ'երթայ Հերակլիտաս անասնոց թրիքին մէջ կը թաթիտուի , որ կամ առողջութիւն գտնէ կամ մահ , և կը գտնէ ետքինս :

Դասունք հիմայ յ՝ քերտ : Հեռու աշխարհքներէ եկած պանդուխտ մը կը տեսնա՞ք , ձեռքը դեռ ճամբորդութեան գուազանն կայ , թաւին տակն ալ գիրք մը , զձեզ տեսնելուն պէս ծիծաղեցաւ . որուն որ պատահեցաւ , որուն հետ որ խօսեցաւ՝ վրանին ծիծաղեցաւ . և տեսածներուն վրայ մտածե-

լով ալ դեռ կը ծիծաղի . ասիկայ է Կփեմոկրիտոսն : Մարդկանց գրեթէ ամէն գործքերը թեթեամտութենէ մը առաջ եկած կը տեսնէ՝ ու կը ծիծաղի . Յունաստանէն ինչուան Կփիպոսոս կ'երթայ , անկէ ալ ինչուան Հնդկաստան կը քալէ , ամէն տեղ նոյն կը գտնէ զմարդիկ՝ փոքրախելք և մեծալիշտ . և ճանչնալով որ այս բանս փոխելու ճար չկայ՝ ընկերութենէ չի փախչիր , միշտ մարդկանց հետ կամ գրքերուն հետ է իր կենակցութիւնը . անդադար կը ծիծաղի մարդկանց վրայ , անոր համար որ ասոնք՝ չարիքը բարիք կը կարծեն , կամ մտքերնին դրեր են թէ անոնց դիւրին դարման կայ , և չեն իմանար՝ որ ողբալով ոչ ներկայ չարիքն կ'անցնի , ոչ ապագայն կը փախչի : Իւրիշները իր կերպին վրայ կը նեղանան և պատճառը չեն հասկընար , նորէն վրանին կը ծիծաղի . քաղաքացիքն ալ դժարելով՝ զինքը խենթի տեղ կը դնեն , կը կանչեն զՀիպոկրատ բժշկապետն որ Կփմոկրիտոսի խելքն գլուխը բերէ . Հիպոկրատ անոր քանի մը բան հարցընելով՝ կ'իմանայ ինչ լուսաւոր մտքի տէր ըլլալն , և կը դառնայ քաղաքացոց կ'ըսէ , թէ Կուք Կփմոկրիտոսէն շատ մեծ խենթեր էք , և կը թողու կ'երթայ : Կարեհ Կարսից մեծ թագաւորն՝ աղջկանը մահուան վրայ անմխիթար սուգի մէջ ըլլալով՝ կը լսէ Կփմոկրիտոսին մշտած ծիծաղ բնութիւնը և կը կանչէ շատ բան կը խոստանայ իրեն՝ թէ որ զինքը կարենայ մխիթարել : Կփմոկրիտոս կը խընդրէ իրմէ որ հրաման տայ բոլոր աշխարհածաւալ տերութեանը մէջ իրէք հոգի գտնելու որ վիշտ մը ունեցած ըլլան . կը փնտուռին և չեն գտնուիր . կ'իմանայ Կարեհ՝ որ վիշտք սեփական են մարդու և անով կը մխիթարուի : Կփմոկրիտոս ալ ընկերութեան չարիքն՝ կարծիքէ դուրս բաներ չսեպելով՝ ամենուն հետ անխուով կ'ապրի ինչուան 109 տարի , գրեթէ Հերակլիտասին կրկին կեանքը :

Եյս կարճ նկարագրէս ալ կրնանք մտաբերել՝ թէ Հերակլիտասին կերպը

դիւրաւ կը տանի զմարդ անհաւանու-
թեան և անցուսութեան . ուրիշի վրայ
խիստ դատաւոր մը կ'ըլլայ , և երթա-
լով՝ ամենուն ալ դատող կ'ըլլայ . զէշ
համարմունք մը կ'ունենայ հասարակայ
վրայ , մարդկութիւնը ցած բան մը կ'ե-
րեայ , և նախախնամութիւնն ալ կը
մեղադրուի : Բնիկ անդին ինչ կը մնայ :

Վիմոկրիտոսն ալ կարելի է իր կեր-
պով չափն անցուցեր է . սակայն աւելի
չիտակ կ'երեայ բռնած ճամբան . և իր
ծիծաղը աւելի հաճելի կրնայ ըլլալ՝
քան մէկալին դաւնացուցիչ ողբը . և
թէ որ երկուքն ալ անօգուտ ըլլային
մարդկանց՝ դարձեալ պէտք էր Վիմո-
կրիտոսինը ընտրել , ուսկից գոնէ իրեն
մնաս մը չէր ըլլար , իսկ Հերակլիտա-
սին սուգը իրեն ալ ծանր էր ուրիշի ալ :

Երկուքն ալ զէշ : Արնան նաև կարե-
կցութենէ առաջ գալ . ասիկայ է լաւն ,
բայց չափի մէջ կենալով . մեր փիլիսո-
փայքն երկուքն ալ չափէն անցեր էին ,
բայց տարբերութիւնը այս է՝ որ Հե-
րակլիտասին կերպը շուտով կ'այլայլէ
զչափն և անտանելի կ'ըլլայ . իսկ Վի-
մոկրիտոսին քիչ մը աւելին ալ տանելի
է . վասն զի ծաղրը թեթեւ է քան զար-
ցունքն :

Սիւսն թէ մեր դիտմունքն այս փի-
լիսոփաներն դատապարտել կամ պաշտ-
պանել չէ , հապա անոնց սկզբունքն և
հետեանքն քննել . և ինչպէս այս քննու-
թեան ատեն կը հարկադրինք մէկը քան
զմէկան վերադասել , այսպէս ալ կը
հարկադրինք երկուքն ալ դատապար-
տել այն բանին համար՝ որ երկուքն ալ
զմարդիկ բաղդի խաղալիկ սեպեցին ,
ամէն բան դիպուածով կամ բաղդին
բռնութեամբը եղած : Ինչպէս որ ասոնց
բռնած կերպին հետևողք կան , գուցէ
այս ծուռ կարծեաց ալ տեղիք տուող
գտնուին : Բոնց երկուքին մէկ պատաս-
խան տանք . թէ որ բաղդով հարկով
է որ մարդիկ այդ չարեաց կը հանդի-
պին , ինչ կ'աշխատիք . դու ինչո՞ւ այդ-
չափ կը հօգաս կը մնալիս անդադար կու-

լաս . դու ալ ինչո՞ւ ամէն հեղ իբրև նոր
բաներու հանդիպած կը ծիծաղիս . ծի-
ծաղէ մէկ անգամ լաւ մը բաղդին վրայ ,
դուն ալ լաւ մը լաց անգամ մը , անկէ
վերջը ձեր բանը նայեցէք :

Բայց մենք որ աստուածապաշտ եմք
և ոչ բաղդապաշտ , մենք պէտք է մտա-
ծեմք՝ որ ինչպէս Բստուած միայն է Բս-
տուած , այսպէս ամենայն ինչ իր կա-
մօքն , գիտութեամբն և ներելովն կ'ըլ-
լան . մենք քիչ անգամ եղածներուն
պատճառը գիտեմք , քիչ անգամ հե-
տեանքներն ալ կը տեսնեմք . ծիծաղ-
նիս ալ , լացերնիս ալ կրնայ սխալ ըլլալ :
Վախ պէտք է ճանչնանք՝ որ իրաւ աշ-
խարհս չարեօք լի է , և պէտք է սրտանց
ցաւինք անոր համար , բայց պէտք չէ որ
դրսուանց ալ յայտնեմք միշտ ցաւերնիս ,
անդադար անոնց վրայ խօսիմք կամ ող-
բամք . ուսկից առաջ կու գան՝ դատ-
մունք , բամբասանք , գանգատանք , սրը-
տի մաշուք , անհանգստութիւն խղճի ,
ևն . պէտք է չափաւոր ըլլայ ցաւերնիս ,
անանկ որ արդեւք չըլլայ մեր պարտքե-
րուն և բարեմարդութեան : Սեռել մը
տեսնանք՝ ինչ կ'ընենք , քիչ մը կը ցա-
ւինք , կը կարեկցինք , արցունք մը կը
բերենք , կ'երթանք մեր բանին կը
նայինք . բայց թէ որ մենք մեր արնէն
մեռել մը ունենանք՝ անոր վրայ շատ կը
ցաւինք , երկայն կ'ողբամք , աւելի ար-
ցունք կը թափեմք . այսպէս ալ ընելու
է չարեաց վրայ . թէ որ մենք եմք չա-
րեաց տէր՝ մեռելը մերն է՝ պէտք է մենք
ողբամք . թէ որ ուրիշներն են՝ մեռելը
ուրիշին է , մենք ցաւակից ըլլանք ,
թող ինքը ողբայ : Ետ ողբացողը՝
կամ մեռելին տէր կը կարծուի , կամ
մեռնելուն պատճառ , կամ դատող . ի-
րենք ալ անիրաւութիւն է : Բստուած
պիտի դատէ և ոչ մենք . մենք պիտի
ճանչնանք զբարին որ հետեւինք և պաշտ-
պանեմք . պիտի ճանչնանք զչարն ալ՝ որ
չընեմք և զգուշանամք : Բշխարհք լի
է չարեօք , բայց ոչ եթէ միակտոր չա-
րութիւն է . բարի ալ կայ չար ալ կայ ,
ուչ Հերակլիտէս պէտք է ըլլալ ոչ Վի-
մոկրիտոս . թէ որ չարիքը չորս դիգ ա-

ուեր է լալով լալով ինչ օգուտ կ'ընես քեզի . կամ ծիծաղելով կ'ազատիս անկէ : Այնպէս մարդու վայել այն է՝ որ մարդ ճանչնայ թէ ամէն բան Մտուծոյ տնօրինելովն կ'ըլլան , և ջանայ իր կամքն ալ Մտուծոյ կամայն միաբանել . այն ատեն ոչ լաց հարկաւոր է ոչ ծիծաղ : Բայց որովհետեւ ընկերութեան մէջ եմք , և երբեմն ուրախ մը կը տեսնամք՝ երբեմն տրտում մը , ինչպէս որ մենք ալ այս հակառակ կրբերը կը զգամք , պէտք է մեր կրօնքին ամենէն մեծ և առաջին փիլիսոփային հետեւինք , Պօղոս առաքելոյն , որ ըսաւ՝ « Եւ ընդ լաւս ցողս և խնդալ ընդ խնդացողս » . այս է ճշմարիտ սրտակցութիւն , որ չափը չանցնիր . սիրտը միայն մէկ դի չի պառկիր , գիտէ որ մէկալ դին ալ պէտք է դառնալ՝ կը նայի մէջ տեղուանքը զրտնուի :

Ուրեմն ոչ հերակլիտէս և ոչ Պիմոկրիտոս , այլ ստոյգ իմաստունն Պօղոս , և իր ամենիմաստ վարդապետն Վրիատոս . որ թէպէտ և սրտանց սուգի մէջ էին աշխարհիս չարեաց վրայ , բայց ընկերութեան մէջ զուարթերես . և մեզի սրտի հանդարտութիւն սորվեցուցին և ոչ ալէկոծութիւն , ինչպէս որ չարեաց վրայ մտածողաց սիրտն կ'ունենայ : Բորդ ու աշխարհատես , գիտցիր՝ որ Եսով և ալիք , Սարդ և չարիք . քանի որ մէկն կայ մէկալն ալ կ'ըլլայ . բայց ինչպէս ծովն երբեմն կը հանդարտի երբեմն կը յուզի , այսպէս ալ է մարդկանց բնութիւնը , երբեմն խաղաղ երբեմն խռովի . խաղաղութեան ատեն ուրախ կեցիր , բայց մի կարծեր թէ միշտ խաղաղութիւն կ'ըլլայ . խռովութեան ատեն՝ զգոյշ կեցիր և մի կարծեր թէ միշտ խռովութիւն կը տեւէ . ալէկոծութեան և չարեաց չափն ալ կայ . երբոր մանրեն ալիք և ոչ սաստիկ հովեր՝ կտրիճ նաւապետը՝ ծիծաղելով կ'անցնի անոնց սպառնալեաց միջէն . այսպէս ալ կտրիճ մարդը՝ (և պէտք է որ մարդ կտրիճ ըլլայ) շատ չարեաց վրայ՝ որ ըստ ինքեան վնաս մը չեն հասցըներ մեզի , կամ կրնանք դիւրաւ տեղի տալ , պէտք

է որ ծիծաղի՝ քան անճրրկած վախկոտ լըխկոտ կենայ ու լայ : Իսկ թէ որ հոն ու ծով սաստկացած՝ նաւուդ հետ կը պատերազմին , կամ պէտք է նաւահան գիտ մը քաշուիս կենաս՝ ինչուան որ մրրիկն անցնի , կամ ճարտարութիւնդ բանեցընես՝ մրրիկն սպառնալեաց դէմ ճամբադ առաջ երթարով . գիտնալով որ ճարտարութիւնն , հնարք և համբերութիւնն է որ կը յաղթէ անոր , զէնքով հետը կուռիլ չըլլար : — Պաշտպանէ զքեզ և զընկերդ՝ թէ որ վնասը քեզի կը հասնի , և կրնաս պաշտպանել . մէկդի քաշուէ՝ թէ որ վնաս մը չկայ . իսկ թէ որ քաշուիլդ ալ ուրիշի վնաս է , և քու ուժդ ալ չարեաց դէմ չի բաւեր , յիշէ հոս , ու՛մարդ , որ դու հերակլիտեայ և Պիմոկրիտոսի կարծածին պէս բազդի խաղալիկ չես՝ հապա Մտուծոյ մը ստեղծուած և պաշտպանածն ես . ան համբերութեան պահպանակը , դատաստանը յանձնէ Մտուծոյ . և դուն քեզի կարելի զգուշութիւններդ ընելով՝ սպասէ Մտուծոյ ալ . գիտցիր որ ամէն վշտաց դէմ և մանաւանդ անոնց որոնց ճար չես տեսներ՝ ամենէն խելացի ամենէն զօրաւոր և մէկ հատիկ դեղն է համբերութիւն . մէկ հատիկ մսիթարանքն է խիղճը մաքուր պահել խռովութեանց մէջ , և մէկ հատիկ յոյսն է՝ Մտուած ապաւինիլն :

Գեմոսթենես ասէ . Որպէս զցորեան ոչ ՚ի գեղեցիկ դաշտէ և յարտէ դովմք , այլ որ հաց գեղեցիկ լինի ՚ի կերակուր , և ոչ զայր ՚ի յաղգէ սղնուի , այլ որ բնութեամբ և յեղանակաւ լուսգոյնք իցեն :

Չսա հարցեալ թէ ո՞րք իցեն քաջատոյճն , ասէ . Որք յաղթեն փառաց և ընչից և հեշտութեանց և կենաց անցաւորաց , և որ սոցին հակառակացն վէհադոյնք իցեն՝ արքատութեան և անփառութեան ցաւոց և մահու :

